Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
13/09/2010թ թիվ 10-Լ որոշմամբ

Փոփոխված է 06/10/2010թ թիվ 14-Լ որոշմամբ
17/11/2010թ թիվ 19-Լ որոշմամբ
23/09/2011թ թիվ 73-Լ որոշմամբ
02/04/2012թ թիվ 6-Լ որոշմամբ
09/07/2012թ թիվ 10-Լ որոշմամբ
20/12/2012թ թիվ 19-Լ որոշմամբ
31/01/2013թ թիվ 23-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«19» մարտի 2013թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-002

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱՋՄԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ)

ԵՐԵՎԱՆ - 2013

ԳԼՈՒԽ 1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն հրահանգում օգտագործվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

2. ԱՊՊԱ վկայագիրը (այսուհետ՝ Վկայագիր), ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված դեպքում Վկայագրի հավելվածները կնքվում (ստորագրվում, իրավաբանական անձ կողմերի մոտ կնիքի առկայության դեպքում՝ նաև դրոշմակնքվում) են երկու օրինակից, որոնցից մեկ օրինակը՝ կից ԱՊՊԱ պայմաններով, տրվում է ապահովադրին (ապահովադրի լիազորված անձին), իսկ մյուս օրինակը պահվում է ապահովագրողի (ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) մոտ: Վկայագրի, ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված դեպքում Վկայագրի հավելվածների՝ ապահովագրողի օրինակին ԱՊՊԱ պայմանները չեն կցվում: Վկայագիրը և ԱՊՊԱ պայմանները, ինչպես նաև, սույն հրահանգով նախատեսված դեպքում, Վկայագրի հավելվածները տրամադրվում են ապահովադրին (ապահովադրի լիազորված անձին) միմյանց կարված կամ տեխնիկական այլ միջոցներով ամրացված ձևով:

3. Վկայագրի տվյալները լրացվում են մեկ էջի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վկայագրով ապահովագրվում է մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, և (կամ) լիազորված տիրապետողների քանակը մեկից ավելի է: Այս դեպքերում բոլոր ավտոտրանսպորտային միջոցների և (կամ) լիազորված տիրապետողների վերաբերյալ, ինչպես նաև դրանց հետ կապված այլ տեղեկատվությունն արտացոլվում է առանձին էջի (էջերի) վրա՝ Վկայագրի համապատասխան հավելվածով սահմանված ձևով: Ընդ որում, ավտոտրանսպորտային միջոցների և լիազորված տիրապետողների քանակից կախված՝ կարող են ավելացվել համապատասխան քանակով տողեր:

4. Վկայագիրը և դրա հավելվածները լրացվում են ապահովագրողի աշխատակցի, լիազորված անձի կամ գործակալի կողմից համակարգչի կիրառման միջոցով՝ սույն հրահանգով և Բյուրոյի այլ կանոններով սահմանված կարգով:

5. Մեկ պայմանագրով մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրելու դեպքերում Վկայագրին կցվում է Վկայագրի առաջին հավելվածը, իսկ այն դեպքում, երբ Վկայագրով ապահովագրվում է մեկ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն և նախատեսվում են մեկից ավելի լիազորված տիրապետողներ, Վկայագրին կցվում է Վկայագրի երկրորդ հավելվածը: Այն դեպքում, երբ Վկայագրի գործողության ընթացքում ապահովադիրը հայտ է ներկայացնում ապահովագրողին՝ լիազորված տիրապետողներ դաշտում փոփոխություններ կատարելու համար (լիազորված տիրապետողներ ավելացնելու կամ պակասեցնելու), ապահովագրողը և ապահովադիրը կնքում են ապահովագրողի կողմից սահմանված կարգի համաձայնագիր՝ Վկայագրում (Վկայագրի հավելվածում) համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

6. *(Ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 23.09.2011թ թիվ 73-Լ որոշմամբ)*

6.1. *(Ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 23.09.2011թ թիվ 73-Լ որոշմամբ)*

6.2. *(Ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 09.07.2012թ թիվ 10-Լ որոշմամբ)*

6.3. *(Ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 09.07.2012թ թիվ 10-Լ որոշմամբ)*

7. ԱՊՊԱ պայմանագրերը տպվում են A4 ֆորմատի թղթի վրա, իսկ ԱՊՊԱ պայմանները կարող են տպագրվել նաև A5 ֆորմատի թղթի վրա՝ սև գույնով (բացառությամբ ընկերության լոգոտիպի և մինչև «1. Ապահովադիր» դաշտը (չներառելով այդ հորիզոնականը) լրացվող տեղեկատվության գույնի, որի ընտրությունը կատարվում է տվյալ ընկերության կողմից) և առնվազն համակարգչի 8 տառաչափով (բացառությամբ պայմանագրի տողատակի նշումների, որոնք կարող են տպվել ավելի փոքր տառաչափով), «Յունիկոդ» տառատեսակով: ԱՊՊԱ պայմանագրի ձևի խախտում չեն համարվում պայմանագիրը պարունակող թղթի վրա կատարված դիզայներական ձևավորումները, որոնք չպետք է խոչընդոտեն պայմանագրի տեքստի լիարժեք ընթեռնելիությանը:

8. Վկայագրերը տպագրվում են այնպես, որպեսզի պահպանվեն արտացոլման ենթակա բոլոր տվյալները՝ ըստ սույն որոշմամբ սահմանված բաժինների հաջորդականության: Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, պահպանելով Վկայագրի բաժինների հաջորդականությունը, կարող են փոփոխել յուրաքանչյուր բաժնի ներսում տվյալների հաջորդականությունը և (կամ) տեղեկատվության լրացման համար նախատեսված աղյուսակի սահմանները՝ առանց որևէ տվյալ ավելացնելու կամ պակասեցնելու: Վկայագրի բոլոր համարակալված բաժինները և դրանց ներքո գտնվող դաշտերը (աղյուսակները) պետք է միմյանցից սահմանազատվեն հստակ տեսանելի սահմանագծերով:

9. Ապահովադրին տրամադրվող Վկայագրի օրինակին ԱՊՊԱ պայմանների հետ կցվում է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպություն-ների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի Հավելված 9-ով սահմանված Վեճերի լուծման բացատրական ամփոփագիրը:

9.1. ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ ապահովադրի ներկայացրած բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով պահպանվում և արխիվացվում են համապատասխան ապահովագրական ընկերության կողմից առնվազն 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 2. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Վկայագրի վերևի ձախ մասում՝ «Ապահովագրական ընկերության լոգոտիպը» դաշտում տպվում է ապահովագրողի լոգոտիպը, իսկ ***«Վկայագիր N»*** դաշտում՝ վանդակների մեջ, տպվում է վկայագրի սերիան և հերթական համարը՝ Բյուրոյի խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

11. Վկայագրի ***«Ապահովագրող»*** դաշտում լրացվում է ապահովագրական ընկերության անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամարները (որով

ապահովագրական պատահարի մասին կարելի է տեղեկացնել ապահովագրողին), ֆաքսը, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման համարը, լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշիվը։

12. Վկայագրի ***1-ին՝ «Ապահովադիր» դաշտում,*** լրացվում է՝

1) <u>ֆիզիկական անձի դեպքում՝</u>

ա. անունը, ազգանունը,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ հաստատված անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկի համարը, ում կողմից է տրվել, անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը,

գ. սոցիալական ապահովության քարտի համարը (առկայության դեպքում),

դ. ծննդյան ամսաթիվը,

ե. բնակության և հաշվառման հասցեները (եթե դրանք չեն համընկնում),

զ. վարորդական վկայականի համարը, տրման ամսաթիվը, վարորդական ստաժը (առկայության դեպքում)

է. հեռախոսահամար(ներ), էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում),

ը. Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը,

2) <u>իրավաբանական անձի դեպքում՝</u>

ա. լրիվ անվանումը,

բ. ՀՎՀՀ,

գ. պետական գրանցման վկայականի համարը,

դ. գրանցման երկիրը և գտնվելու վայրը (մարզ, համայնք, փողոց, տուն/շենք, բնակարան),

ե. հեռախոսահամար(ներ),

զ. Ապահովագրողի ցանկության դեպքում կարող են լրացվել նաև բանկային հաշվի համարները։

3) <u>Հայաստանի Հանրապետության դեպքում՝</u>

ա. պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,

բ. պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն (մարզ, համայնք, փողոց, տուն/շենք, բնակարան),

գ. հեռախոսահամար(ներ),

4) <u>Օտարերկրյա պետության դեպքում՝</u>

ա. երկիրը,

բ. օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը (դեսպանատուն, հյուպատոսարան, այլ),

գ. օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն (մարզ, համայնք, փողոց, տուն/շենք, բնակարան),

5) <u>Համայնքի դեպքում՝</u>

ա. համայնքի անվանումը

բ. համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը,

գ. համայնքի անունից հանդես եկող մարմնի հասցեն (մարզ, համայնք, փողոց, տուն/շենք, բնակարան),

6) <u>Միջազգային կազմակերպության դեպքում՝</u>

ա. միջազգային կազմակերպության անվանումը,

բ. միջազգային կազմակերպության հասցեն (մարզ, համայնք, փողոց, տուն/շենք, բնակարան)։

13. Վկայագրի ***2-րդ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների (Ա/մ) քանակ» դաշտում*** լրացվում է այդ Վկայագրով ապահովագրվող ավտոտրանսպորտային միջոցների քանակը: Եթե նշված դաշտում լրացվում է 1-ից ավելի թիվ, ապա Վկայագրի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դաշտերը չեն լրացվում, իսկ այդ դաշտերում լրացման ենթակա տեղեկատվությունն արտացոլվում է սույն հրահանգի 5-րդ կետով սահմանված կարգով:

14. Վկայագրի ***3-րդ՝ «Ավտոտրանսպորտային միջոց (Ա/մ)» դաշտում***, լրացվում են այն ավտոտրանսպորտային միջոցի տեսակը՝ թեթև մարդատար, բեռնատար, միկրոավտոբուս, ավտոբուս, տրոլեյբուս, մոտոտրանսպորտ, այլ («այլ»-ի ներքո մտնում են տրակտորները և նախորդ նշումներում չընդգրկված այլ ավտոտրանսպորտային միջոցները), մակնիշը (տիպարը) (օրինակ՝ BMW-X5-4.4L), հաշվառման համարանիշը, հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը, շարժիչի հզորությունը, շարժիչի համարը, թափքի համարը (առկայության դեպքում), նույնացման համարը (VIN) (առկայության դեպքում), վազքը (կմ), թողարկման տարեթիվը և գույնը, որի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրվում է: Սույն կետով պահանջվող տվյալները լրացվում են՝ հիմք ընդունելով Տեղեկատվական համակարգից ստացված տեղեկատվությունը, իսկ համապատասխան տեղեկատվությունը չստացվելու կամ ապահովադրի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած այլ փաստաթղթերի հետ անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում՝ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում (մաքսային հայտարարագրում) առկա տեղեկատվությունը, իսկ դրա բացակայության կամ իրականությանը չհամապատասխանելու դեպքում՝ ապահովադրի ներկայացրած այլ փաստաթղթերը կամ տեղեկությունները՝ ներառյալ ավտոտրանսպորտային միջոցի լուսանկարը: Սույն կետով նախատեսված փաստաթղթերի կամ տեղեկությունների բացակայության դեպքում «շարժիչի հզորությունը» դաշտը լրացվում է՝ հիմք ընդունելով Բյուրոյի խորհրդի կողմից սահմանված ինտերնետային կայքերից որևէ մեկում ներկայացված տվյալները: «Ա/մ տեսակը» դաշտում փակագծերի մեջ կատարվում է նաև «կցորդով» կամ «առանց կցորդի» նշագրում՝ կախված այն հանգամանքից, թե պայմանագրի գործողության ընթացքում տվյալ ավտոտրանսպորտային միջոցին կցորդ կցվելու է, թե՝ ոչ: Ընդ որում յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն ինքնուրույն է որոշում Վկայագրի համապատասխան դաշտում «առանց կցորդի» նշագրման անհրաժեշտությունը, երբ տվյալ ավտոտրանսպորտային միջոցին կցորդ չի կցվելու, և համապատասխանաբար կրում դրա իրավական հետևանքների ռիսկը: Վազքը լրացվում է՝ հաշվի առնելով պայմանագրի կնքման պահին ավտոտրանսպորտային միջոցի վազքի ցուցանիշը:

15. Վկայագրի ***4-րդ՝ «Շահագործման նպատակ» դաշտում*** լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակը պայմանագրի գործողության ընթացքում: Այն լրացվում է ապահովադրից ստացված տեղեկատվության համաձայն: Այս բաժնում կատարվում են հետևյալ նշումները՝

1) ***«անձնական»***, երբ ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է անձնական նպատակով,

2) ***«ծառայողական»***, երբ ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է ծառայողական նպատակների համար,

3) ***«տաքսի»***, երբ ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես տաքսի,

4) ***«հանրային տրանսպորտ»***, երբ ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես հանրային տրանսպորտ (օրինակ՝ միկրոավտոբուսներ, ավտոբուսներ, տրամվայներ, տրոլեյբուսներ):

5) ***«առևտրային օգտագործման»***, երբ ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է ապրանքներ առաքելու և (կամ) ծառայություններ մատուցելու նպատակով:

6) ***«այլ»,*** այն ավտոտրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվելու են սույն կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսվածից տարբերվող նպատակներով:

16. Վկայագրի 4-րդ՝ «շահագործման ձև» դաշտում թույլատրվում է կատարել միայն մեկ նշում: Այն դեպքում, երբ ավտոտրանսպորտային միջոցը դասվում է ծառայողական կամ անձնական և միևնույն ժամանակ առևտրային օգտագործման հատկանիշներին, ապա Վկայագրում նշվում է, որպես ***առևտրային օգտագործման***:

17. Վկայագրի 5-րդ՝ **«Շահագործման հիմնական վայրը»** դաշտում ապահովադրից ստացված տեղեկատվության հիման վրա կամ դրա բացակայության դեպքում՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայագրի տվյալների՝ լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման այն մարզը կամ նշում է կատարվում «Երևան» դաշտում, որտեղ նախատեսվում է վարել ավտոտրանսպորտային միջոցը: Եթե որպես շահագործման վայր նշվում է որևէ մարզ, ապա լրացուցիչ նշում է կատարվում նաև «գյուղական» կամ «քաղաքային» դաշտերից որևէ մեկում:

18. Վկայագրի ***6-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում*** ապահովադրի հայեցողությամբ լրացվում է հետևյալ չորս տարբերակներից որևէ մեկը.

1) դրվում է «-» (գծիկ) նշանը, որը նշանակում է, որ լիազորված տիրապետող է համարվում միայն տվյալ Վկայագրով նախատեսված ապահովադիրը, այդ դեպքում «Ապահովադիր» դաշտում պարտադիր լրացվում են ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները,

2) նշվում են այն անձանց ցանկը և նրանց վերաբերյալ սույն հրահանգի 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տվյալները, ում ապահովադիրը նախատեսում է վարելու նպատակով տրամադրել ավտոտրանսպորտային միջոցը կնքվող պայմանագրի գործողության ժամկետում: Սույն ենթակետով նախատեսված դեպքում ապահովադրի վարորդական վկայականի վերաբերյալ տեղեկատվության լրացման դեպքում ապահովադիրն ինքնաշխատ կերպով հանդիսանում է լիազորված տիրապետող: Ընդ որում, եթե ապահովադիրն ունի վարորդական վկայական և չի ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, ապա Վկայագրի ապահովադիր դաշտում վարորդական վկայականի վերաբերյալ որևէ նշում չի կատարվում,

3) կատարվում է «*Առանց սահմանափակումների*» նշում, որը նշանակում է, որ Վկայագրով ապահովադիրը հայտարարում է, որ պայմանագրի գործողության ընթացքում իր կողմից վստահված ցանկացած անձ կարող է վարել ավտոտրանսպորտային միջոցը և այդ անձը համարվում է լիազորված տիրապետող,

4) այն դեպքում, երբ լիազորված տիրապետողների քանակը մեկից ավելի է, նշում է կատարվում «համաձայն Հավելվածի», և վկայագրին կցվում է Վկայագրի համապատասխան հավելվածը (կախված այն հանգամանքից, թե մեկ, թե մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունն է ապահովագրվում տվյալ պայմանագրով), որտեղ արտացոլվում է բոլոր լիազորված տիրապետողների վերաբերյալ տեղեկատվությունը:

19. Վկայագրի ***7-րդ՝ «Ապահովագրության ժամկետ» դաշտում*** լրացվում է ապահովագրության սկիզբը և ավարտը՝ օր/ամիս/տարի/ժամ/ ֆորմատով:

20. Վկայագրի ***8-րդ՝ «Ապահովագրական գումար» դաշտը*** լրացման ենթակա չէ:

21. Վկայագրի ***9-րդ՝ «Հատուցվող գումար» դաշտում*** նշում է կատարվում «չի կիրառվում» վանդակում:

22. Վկայագրի ***10-րդ՝ «Ապահովագրավճար» կետում*** լրացվում է ապահովադրի կողմից Վկայագրով վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը՝ թվերով և փակագծի ներսում՝ տառերով: Այն դեպքում, երբ պայմանագրով ապահովագրվում են մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ, ապա այս մասում նշվում է բոլոր ավտոտրանսպորտային միջոցների համար Վկայագրով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարը, իսկ յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված ապահովագրավճարը նշվում է Վկայագրին կցվող հավելվածի համապատասխան դաշտում:

23. Վկայագրի ***11-րդ «Ապահովագրավճարի վճարման կարգը» դաշտում*** նշում է կատարվում ապահովագրավճարի վճարման ձևի մասին, մասնավորապես, կանխիկ կամ անկանխիկ՝ միանվագ կամ տարաժամկետ վճարման եղանակներով: Կանխիկ դաշտում նշում կատարելու դեպքում նշվում է Վկայագրի նույն հորիզոնականում նշված երկու տարբերակներից որևէ մեկը՝ կախված նրանից, թե ապահովադիրը վճարման տարբերակներից ինչպիսի տարբերակ է ընտրել, ընդ որում, երկրորդ տարբերակը նշվելու դեպքում նշվում է նաև վճարված ապահովագրավճարի չափը և ապահովագրավճարի մնացած մասի վճարման կոնկրետ կարգն ու ժամկետները: Անկանխիկ դաշտում նշում կատարելու դեպքում նույն հորիզոնականում նշվում են ապահովագրավճարի վճարման կոնկրետ կարգն ու ժամկետները (օր.՝ 20.000 ՀՀ դրամը վճարվում է մինչև 16.05.2011 թ., իսկ մնացած 20.000 ՀՀ դրամը՝ մինչև 11.05.2012 թ.՝ յուրաքանչյուր ամիս հավասար չափաբաժիններով):

24. *Վկայագրի* ***12-րդ, 13-րդ և 14-րդ*** կետերը լրացման ենթակա չեն: Դրանք սահմանվում են օրենքով և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից հաստատված պայմաններով, *որտեղ ապահովագրողն իրավունք չունի կատարելու փոփոխություններ:*

25. Վկայագրի ***15-րդ կետի 1-ին սյունակում՝ «Ապահովագրողի անունից»,*** դաշտում լրացվում է՝

1) Ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը և կարող է դրվել ապահովագրական ընկերության կնիքը այն դեպքում, երբ ապահովագրական ընկերության անունից տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքում է ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարը,

2) լիազորված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և տրման ամսաթիվը և կարող է դրվել ապահովագրական ընկերության կնիքը այն դեպքում, երբ ապահովագրական ընկերության անունից տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքում է ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավար չհանդիսացող այլ լիազորված ֆիզիկական անձը,

3) ապահովագրական գործակալի անունը, ազգանունը (անվանումը), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում հաշվառման վկայականի համարը, ստորագրությունը (իրավաբանական անձ գործակալի դեպքում՝ համապատասխան իրավասություն ունեցող անձի ստորագրությունը) և կարող է դրվել ապահովագրական ընկերության կնիքը այն դեպքում, երբ ապահովագրական ընկերության անունից տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքում է ապահովագրական գործակալը:

26. Վկայագրի ***15-րդ կետի 2-րդ սյունակում՝ «Ապահովադրի անունից»*** մասում նշվում է ապահովադրի անունը, ազգանունը և ստորագրությունը, իսկ ոչ ֆիզիկական

անձ ապահովադրի դեպքում՝ ապահովադրի գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը, ստորագրությունը և կարող է դրվել կազմակերպության կնիքը: Այն դեպքում, երբ ապահովադրի անունից հանդես է գալիս լիազորված անձ, ապա այս մասում նշվում է լիազորված անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և (կամ) տրման ամսաթիվը, լիազորված անձի ստորագրությունը:

27. Վկայագրի ***16-րդ «Պայմանագրի կնքման և ապահովադրին տրման ամսաթիվ» դաշտում*** լրացվում է ապահովադրին Վկայագիրը տալու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի/ ֆորմատով:

28. Վկայագրի «Նշումներ» դաշտում կատարվում են հետևյալ նշումները՝

1) լրացվում է տվյալ ԱՊՊԱ պայմանագրի հետ տրամադրված ԱՊՊԱ կտրոնի (կտրոնների) համարը (համարները կամ դրանց միջակայքը),

2) կատարվում է «Կրկնօրինակ» նշագրում, եթե ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Վկայագիրը վնասվելու (խոտանվելու), կորելու, հափշտակվելու կամ ոչնչացվելու հետևանքով ապահովադրի (ապահովադրի լիազորված անձի) դիմումի հիման վրա նրան տրվել է Վկայագրի կրկնօրինակ,

3) Վկայագրի 4-րդ՝ «Շահագործման նպատակ» դաշտում «հանրային տրանսպորտ» նշումը կատարվելու դեպքում լրացվում է «երթուղային տաքսի», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես երթուղային տաքսի, կամ «ոչ երթուղային տաքսի», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես այլ տեսակի հանրային տրանսպորտ,

4) Վկայագրի 4-րդ՝ «Շահագործման նպատակ» դաշտում «այլ» նշումը կատարվելու դեպքում լրացվում է «վարձակալության նպատակով», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է պարբերաբար վարձակալության տրամադրելու նպատակով, կամ «ոչ վարձակալության նպատակով», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է դրանից տարբերվող այլ նպատակով,

5) Վկայագրի 18-րդ՝ «Լիազորված տիրապետողներ» դաշտում «Առանց սահմանափակումների» նշումը կատարվելու դեպքում նշվում է ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը:

29. Վկայագրի հավելվածները լրացվում են սույն հրահանգով Վկայագրի համապատասխան դաշտերի լրացման համար սահմանված կանոններին համապատասխան: